



ԼԱՐԻՍԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

*ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց
պատմության ամբիոնի դասախոս*

**ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ
(1918 – 1923 թթ.)**

1918 թ. նոյեմբերին ավարտվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Պատերազմում հաղթանակ տարած Համաձայնության (Անտանտի) պետությունները պարտված Քառյակ միության երկրների հետ հաշտության պայմանագրեր մշակելու, ինչպես նաև հետպատերազմյան առկա հարցերը լուծելու համար հրավիրեցին միջազգային խորհրդաժողով, որն իր աշխատանքը սկսեց 1919 թ. հունվարի 18-ին Փարիզում: Փարիզի հաշտության վեհաժողովին Հայաստանը պաշտոնապես հրավիրված չէր: Սակայն Թուրքիայի հետ մեծ տերությունների կողմից հաշտության պայմանագրի նախապատրաստման ընթացքում, Հայկական հարցի լուծման հետ կապված, Փարիզ էին մեկնել հայկական երկու պատվիրակություններ՝ ՀՀ-ն՝ Ավետիս Ահարոնյանի և Ազգային պատվիրակությունը Պողոս Նուբար փառապաշտանի գլխավորությամբ: Որպես Ազգային պատվիրակության ղեկավար՝ Պ. Նուբարն իր գործունեությունը սկսել էր դեռևս 1912 թվականից: 1912-ի նոյեմբերին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդ Սուրենյանցը կոնդակով Բեռլինի պայմանագիրը ստորագրած տերությունների հետ բանակցելու համար եզրափակաբար մեծահարուստ, բարերար Պողոս Նուբար փառապաշտան լիազոր պատվիրակ նշանակեց և հրահանգեց Ազգային պատվիրակություն կազմել¹:

Առաջին աշխարհամարտի տարիներին ստեղծված միջազգային նոր պայմաններում պատվիրակությունն իր առջև խնդիր էր դրել Անտանտի երկրների օգնությամբ ազատագրել Արևմտյան Հայաստանը թուրքական տիրապետությունից: Ուստի Նուբար փառապաշտան կաթողիկոսի կողմից վստահված պաշտոնի համաձայն շարունակեց իր գործունեությունը: Նա ֆրան-

¹ Տես Հայաստանի ազգային արխիվ՝ ՀԱԱ, ֆոնդ 57, ց.5, գ.27, թ.1-2:

սիային անցնելիք հայկական տարածքներին ինքնավարություն տալու հարցը համարեց գլխավոր պայման, երբ այդ երկիրը պատերազմի տարիներին նրան առաջարկեց ստեղծել Հայկական լեգեոն:

1916 թ. հոկտեմբերին Լոնդոնում Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը, Մարկ Սայքսը (Անգլիա) և Կիլիկիայում Ֆրանսիայի ներկայացուցիչ ժորժ Պիկոն համաձայնագիր ստորագրեցին, ըստ որի Կիլիկիայում թուրքերի դեմ կռվելու համար հայկական լեգեոններ էին կազմվելու: Հարկ է նշել, որ Արևելյան կամ Հայկական լեգեոնը 1918-1920 թթ. զգալի դերակատարություն ունեցավ Մերձավոր Արևելքում Անտանտի հաղթանակի գործում: Ֆրանսիան խոստացավ Կիլիկիայում ինքնավար պետություն հիմնել²:

Աշխարհամարտի ավարտը արտասահմանում գործող հայ ազգային քաղաքական գործիչների, մասնավորապես՝ Ազգային պատվիրակությանն առաջադրեց բազմաթիվ ու բազմաբնույթ հարցեր: Ուստի Պողոս Նուբար փաշան և նրա գործընկերները ամեն կերպ փորձում էին ազգանպաստ լուծում տալ Հայկական հարցին առնչվող խնդիրներին: Երբ 1918 թ. հոկտեմբերին արդեն պարզ էր, որ Թուրքիան պարտություն է կրել և պետք է անձնատուր լինի, հոկտեմբերի 29-ին Նուբար փաշան դիմեց Անտանտի երկրներին, որպեսզի հայերին ճանաչեն պատերազմող կողմ և հրավիրեն մասնակցելու Փարիզի խորհրդաժողովի աշխատանքներին: Այս կապակցությամբ ահա թե ինչ է գրում նա.

«Ազգային Պատվիրակությունը կը կարծէ թէ թափուած արիւնը հարիւր հազարաւոր հայերուն, որոնք ջարդուեցան Համաձայնականներու դատին հաւատարիմ մնալու համար եւ մերժած ըլլալուն համար թուրքաց կողմէ եղած առաջարկները, որով անոնց կը խոստացուէր անկախութիւն՝ ի վարձատրութիւն Դաշնակիցներու դէմ ըլլալիք աջակցութեան, նաեւ բոլոր զոհողութիւնները, որոնց ենթարկուեցան հայերը կամաւորապէս՝ պայքարելով Ֆրանսիայի, Պաղեստինի, Հայաստանի եւ Կովկասի ճակատներուն վրայ, ոչ միայն կ'արդարացնեն իբր պատերազմիկ ազգ ընդունելու իրենց պահանջքը, այլ եւ առ այդ իրենց իրաւունք կու տան»³:

1918 թ. դեկտեմբերի 4-ին Գևորգ 5-րդ կաթողիկոսը Պողոս Նուբար փաշային ուղարկած նամակով տեղյակ էր պահում, որ ՀՀ Կառավարության կողմից մի պատվիրակություն է ուղարկվում Եվրոպա՝ վեհաժողովում Հայկական հարցը պաշտպանելու առաքելությամբ: Կաթողիկոսը հորդորում էր փաշային երկու պատվիրակություններով միախորհուրդ գործել և Հայ արդար դատը հաղթական հանգրվանին հասցնել:

Ազգային պատվիրակությունը Նուբար փաշայի գլխավորությամբ սկսել էր նախապատրաստական աշխատանքները դեռևս Մուդրոսի զինադահարից առաջ: Մինչև Փարիզի խաղաղության խորհրդաժողովի բացումը Նուբար փաշան 1918 թ. հոկտեմբերի 15-ին դիմեց հայ գաղթօջախներին՝ առաջարկելով ներկայացուցիչներ ուղարկել Փարիզ՝ Ազգային պատվիրակությունը համալրելու և վեհաժողովին ներկայացվելիք պահանջները մշակելու համար: Այդ նպատակով Փարիզում են հավաքվում մոտ երկու տասնյակ երկրների հայկական գաղութների, այդ թվում Կովկաս գաղթած

² Տե՛ս Կ. Իզմիրյան, Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցեալին եւ ներկային, Բեյրութ, 1964, էջ 173:

³ Լ. Աճէմեան, Եգիպտահայ տարեցոյց, Աղեքսանդրիա, 1924, էջ 87:

արևմտահայերի ներկայացուցիչները՝ Լևոն Շանթը, Վահան Փափազյանը և Ավետիս Թերզիբաշյանը: Կազմվում է Միացյալ և անկախ Հայաստանի հռչակագիր և 1918 թ. նոյեմբերի 30-ին հրապարակվում:

Պ. Նուբարը դեռևս 1918 թ. հոկտեմբերի 18-ին, համոզվելով, որ Քառյակ միության պարտությունն անխուսափելի է, դիմում է Անտանտի հաղթած պետություններին, որպեսզի Թուրքիայի հետ կնքվելիք առաջիկա զինադադարի համաձայնագրի մեջ ներառվեն Հայաստանին առնչվող հետևյալ կետերը.

1. դաշնակից բանակների պաշտպանությամբ ապահովել հայ տարագիրների վերադարձը հայրենիք,
2. գրավել վեց վիլայեթների ու Կիլիկիայի ռազմավարական նշանակություն ունեցող կետերը,
3. թույլ չտալ օսմանյան կառավարությանն այդ կետերում բնակեցնել մահմեդական բնակչություն,
4. օգնել հայերի պարենավորման կազմակերպմանը, ինչպես նաև Հայաստանի կառավարման համակարգի ստեղծմանը:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսի զինադադարի ստորագրումից հետո՝ նոյեմբերին, Նուբար փաշան ֆրանսիական թերթերին տված հարցազրույցում ներկայացնում է այն սկզբունքները, որոնց իրագործման դեպքում կարող է լուծվել Հայկական հարցը.

- «1. Այլևս ոչ մի կապ թուրքական պետության հետ,
2. Հայկական պետությունը ունենալու է հանրապետական վարչաձև եւ դրուելու է ազատարար ազգերի պաշտպանության տակ, որոնցից մէկը ստանձնելու է Հայաստանի խնամակալութիւնը մինչեւ այն կազմակերպուի եւ կարողանայ ինքնուրոյն գոյատեւել,
3. Հայաստանի մէջ են մտնելու վեց վիլայեթները և Կիլիկիան:

Պողոս Նուբարը նշեց ռուսական Հայաստանի նկատմամբ որևէ պահանջ չունենալու մասին, սակայն եւ յոյս յայտնեց, որ նոր սկզբունքներ որդեգրած Ռուսաստանը, որը յայտարարել է Լեհաստանին ու Ֆիլանդիային անկախութիւն տալու մասին, հայոց հարցում նույնպէս արդարացի մոտեցում կը ցուցաբերի»⁴:

Նշված սկզբունքները Նուբար փաշան զարգացնում է 1918 թ. դեկտեմբերին հրապարակած «Յուշագիր Հայկական հարցի մասին» գրքույկում⁵:

Նույն թվականի դեկտեմբերի 31-ին Պ. Նուբարը «Timens» թերթում տպագրում է ոչ միայն «Հայկական պահանջների» նախագիծը, այլև Միացյալ Հայաստանի քարտեզը: Նա անհրաժեշտ էր համարում ստեղծել հայկական պետություն Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներից, Կիլիկիայից ու Սարաշի սանջակից, որը, մինչև վերջնական կազմակերպվելը, պետք է լիներ որևէ պետության խնամակալության ներքո: Նուբար փաշան նշում էր նաև, որ հետագայում այդ պետությանը կմիանա Արարատյան Հանրապետությունը, որով և Հայաստանը պատնեշ կդառնա պանթուրքիզմի ճանապարհին:

Անդրադառնալով Հայաստանում հայերի փոքրաթիվ լինելու հանգամանքին՝ նա նշում էր, որ երբ 1821 թ. Հունաստանը անկախություն ստացավ, այնտեղ մնացել էին ընդամենը 400 հազար հույներ: Խոսելով այդ խնդրի բարոյական կողմի մասին՝ նա անհավանական էր համարում, որ Եվրոպայի և Ամերիկայի ժողովրդավարները թույլ տան հաղթանակի «Աբդուլ Համիդի,

⁴ «Վերածնունդ», Փարիզ, 14 նոյեմբեր, 1918, թ. 21-22:

⁵ Տե՛ս **Ձ. Որբունի**, Պօղոս փաշա Նուբար, Հաշտության դաշնագիրը, Կ. Պոլիս, 1920, էջ 12:

Էնվերի ու Թալէաթի քաղաքականությունը», վերացվի Հայկական հարցը՝ հայ ժողովրդին բնաջնջելով⁶:

Ժամանակը ցույց տվեց, որ Եվրոպայի ու Ամերիկայի «հայասեր» ղեկավարները բնավ չխորշեցին արդարացնել «հայասպանությունը» և իրենց սեփական շահերի համար սեղմեցին ոճրագործ թուրքի արյունոտ ձեռքը: Մինչդեռ հայ քաղաքական գործիչները անհամբեր սպասում էին իրենց երբեմնի դաշնակիցների արդարացի վճռին, քանի որ չէին հավատում, որ քաղաքակիրթ համարվող արևմտյան պետությունների համար հայերի արյունն աննշան մի կաթիլ էր նրանց քաղաքական ու ֆինանսական խարդավանքների ճանապարհին: Պողոս Նուբարը ջանք չխնայեց Հայաստանի համար «պատերազմող կողմի» կարգավիճակ ապահովելու և Փարիզի վեհաժողովում տեղ ստանալու համար:

Հայ ժողովրդի անունից հրապարակված հռչակագրում նշված էր. «Հայ ազգը ունի մշակոյթի եւ քաղաքակրթութեան աստիճանը, որ իրեն իրաւունք տայ ինքնզինքը կառավարելու... Հետևաբար, համաձայն միակամ փափագին հանուր Հայ ազգին, որուն մէկ մասը արդէն Անկախ Հանրապետութիւն մը կազմած է, Ազգային Պատուիրակութիւնը ... կը յայտարարէ Ամբողջական Հայաստանի Անկախութիւնը Դաշնակից Պետութեանց եւ Միացյալ Նահանգներու պաշտպանութեան տակ եւ կամ Ազգերու Դաշնակցութեան անմիջապէս որ ան կազմուի»⁷:

Պողոս Նուբարը հաստատ համոզված էր, որ Հայկական հարցը վերջապես կլուծվի և առաջինն էր, որ հայտարարեց միասնական հայրենիք ստեղծելու անհրաժեշտության մասին՝ ոչ միայն թուրքական, այլև ռուսական կայսրության հայկական տարածքների միավորմամբ:

Իհարկե, մեր կարծիքով, նա արտահայտել է կորսված անկախ պետականությունը վերականգնված տեսնելու հայ ժողովրդի դարավոր ցանկությունն ու ձգտումը:

1919 թ. փետրվարի սկզբին հայկական երկու պատվիրակությունները Փարիզում ներկայացան դաշնակից պետությունների ներկայացուցիչներին՝ բանավոր հաղորդելով իրենց պահանջները: Նրանց առաջարկվեց հաշտության վեհաժողովին ներկայացնել գրավոր հուշագիր:

Թեև հայկական պատվիրակությունների միջև առկա էին լուրջ տարածայնություններ, այնուամենայնիվ, նրանք հարկադրված էին գործել որպես ամբողջական Հայաստանի միացյալ պատվիրակություն: 1919 թ. փետրվարի 12-ին ՀՀ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանը և Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը երկար վիճաբանություններից հետո խաղաղության վեհաժողովին ներկայացրին Հուշագիրը:

Միացյալ պատվիրակությունը 1919 թ. փետրվարի 26-ին ներկայացավ Փարիզի խորհրդաժողովի Տասի խորհրդի նիստին՝ կրկնելով հուշագրի հիմնական պահանջները:

Այդ առնչությամբ Նուբար փաշան ասել է. «Մեր անկախութիւնը ճանչցած է, համոզված եմ, որ դաշնակիցները ընդունելով մեր պահանջներուն իրաւացիութիւնը, պիտի տան այնպիսի վճիռ մը, որ ամեն կերպով համապատասխանէ մեր յոյսերուն»⁸:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 7-8:

⁷ Նույն տեղում, էջ 13:

⁸ «Ժողովուրդ», 27 ապրիլ – 10 մայիս, 1919, թ. 85-176:

Նույն ժամանակ Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի նախաձեռնությամբ 1919 թ. փետրվարի 24-ից ապրիլի 22-ը Փարիզում տեղի ունեցավ Հայ ազգային առաջին համագումարը: Համագումարը վավերացրեց Հուշագիրը, որը հիմնավորում էր Միացյալ հայկական անկախ պետության ստեղծման անհրաժեշտությունը և ճշտում դրա սահմանները: Ապրիլի 2-ի նիստում ընտրվեց նոր Ազգային պատվիրակություն՝ Պ. Նուբար, Ա. Տեր-Հակոբյան, Ա. Չոպանյան, Գ. Փաստրմաճյան, Հ. Նևրուզ, Վ. Թեքեյան կազմով, որը Հայաստանի Հանրապետության պատվիրակության հետ կազմելու էր «Ամբողջական Հայաստանի պատվիրակություն»՝ ջանալով «ծեռք բերել Հուշագրով բանաձևված հայկական պահանջների գործադրությունը և պետք է հետապնդի ազգային դատին հարակից բոլոր հարցերի բարվոք լուծումը»⁹:

Հայ Ազգային համագումարից հետո Ազգային պատվիրակությունը դիմեց դաշնակիցներին հետևյալ կոչով. «Հայկական նահանգներու սարսափելի սպանդին ճողոպրած և Կովկաս ապաստանած Հայութիւնը կը սպասէ վերադառնալու իր ազատ հայրենիքը»¹⁰:

Հետագա փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ անկախ, ազատ հայրենիքի ստեղծման հնարավորությունը Ազգային պատվիրակությունը և նրա նախագահ Նուբար փաշան կապում էին ԱՄՆ-ի և նրա նախագահ Վ. Վիլսոնի հետ, քանի որ այդ երկիրը նախ՝ հայտնի էր ժողովրդավարական կայուն սկզբունքներով, մինչ այդ շատ չէր միջամտել Ասիայի և Եվրոպայի երկրների ներքին գործերին, ապա՝ Ամերիկյան Հայաստանից հեռու էր, և փոքր էր երկիրը գաղութացնելու հավանականությունը:

1919 թ. ապրիլի 17-ին Պ. Նուբարն ու Ա. Ահարոնյանը հանդիպեցին ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի հետ: Նախագահը նրանց հավաստիացրեց, որ եթե ԱՄՆ-ը որևէ մանդատ վերցնի, ապա դա կլինի Հայաստանին, քանի որ հայերը մեծ համակրանք են վայելում իր երկրում: ԱՄՆ-ի նախագահը խոստացավ նաև, որ ապագա Հայաստանի սահմանները կլինեն հայկական կողմի պահանջներին մոտավորապես համապատասխան¹¹:

Սակայն մեծ պետությունները Հայկական հարցում խոստումներից այն կողմ չանցան, նույնիսկ հայկական պահանջները խիստ ընդդիմության հանդիպեցին Ֆրանսիայի կողմից, որը կարծես թե ձգտում էր Կիլիկիան միացնել Սիրիային: Այստեղ Ֆրանսիայի շահադիտական քաղաքականությունը քննադատելու հետ միասին պետք է նշել նաև հայկական կողմի մեղքը, որը չկարողացավ «լեզու գտնել» ֆրանսիացիների հետ, որոնք հայերի նկատմամբ բավականին բարյացակամ էին Կիլիկիան գրավելու առաջին ամիսներին: Դա պայմանավորված էր ևս մեկ հանգամանքով. սկզբնական շրջանում Կիլիկիան թուրքերից պաշտպանող հիմնական ուժը Հայկական լեգեոնն էր: Սակայն հայ-ֆրանսիական հարաբերությունները հետզհետե վատթարացան, ինչը և բացասաբար ազդեց Հայկական հարցի լուծման վրա:

Այդ է պատճառը, որ Պ. Նուբարը Մարսելի «Արմենիա» թերթի հունիսի 11-ի համարում հրապարակեց իր հեռագիրը Նյու Յորքի մամուլի հայկական բյուրոյին՝ հորդորելով, որ վերջինս ջանք ու եռանդ չխնայի, որպեսզի ԱՄՆ-ն համաձայնվի ստանձնել Հայաստանի հովանավորությունը:

⁹ Հայկական հարց. հանրագիտարան, Եր., 1996, էջ 200:

¹⁰ «Ժողովուրդի ծայն», Փարիզ, 4 մայիս, 1919:

¹¹ Տես «Ուլխտ Արարատի», թ. 1, մայիս-հունիս, 2011:

1920 թ. ապրիլին Իտալիայի Սան Ռեմո քաղաքում Անտանտի պետությունների կողմից հրավիրված խորհրդաժողովն ընդունեց Լ. Ջորջի նախագիծը և, ներկայացնելով ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին, առաջարկեց ընդունել Հայաստանի հովանավորությունը (մանդատը) և միջնորդ լինել նրա սահմանները որոշելու գործում, իսկ չվերցնելու դեպքում ԱՄՆ-ի նախագահին էին թողնում Հայաստանի տարածքի եզրագծումը Տրապիզոնի, Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթների սահմաններում: Դրանով մեծ տերություններն իրենց ձեռքերը լվացին և Հայաստանի սահմանների վճռման հարցը հանձնեցին ԱՄՆ-ի նախագահին՝ քաջ գիտակցելով, որ հայերը սեփական ուժերով նույնիսկ Հայաստանի Հանրապետության սահմանները չեն կարող պաշտպանել օրեցօր հզորացող քեմալական Թուրքիայի հարձակումից, որի, այսպես կոչված, ռազմական հաջողությունները, մեր կարծիքով, պայմանավորված էին դաշնակիցների «անփութությամբ», քանի որ աշխարհամարտում պարտվելուց հետո թուրքերը ինչ-ինչ նկատառումներով չզինաթափվեցին, միաժամանակ ստացան նաև ԽՌ օգնությունը:

Այնուհետև Սան Ռեմոյի խորհրդաժողովում Անգլիայի վարչապետ Լլոյդ Ջորջը և Իտալիայի վարչապետ Ֆրանչեսկո Նիտտին կասկածի տակ դրեցին նաև Էրզրումի՝ Հայաստանին միացնելու հավանականությունը: Պ. Նուբարը և Ա. Ահարոնյանը մեծ ջանքեր գործադրեցին, որպեսզի համոզեն Էրզրումը տալ Հայաստանին:

1920 թ. մայիսի 22-ին ԱՄՆ-ի Սենատը Հայկական հարցի վերաբերյալ համակրանքի բանաձև ընդունեց: Սակայն սենատորները միակարծիք չէին, և Հենրի Լաճի դեկլարարած հոգատարության դեմ պայքարը ձախողեց ԱՄՆ-ի նախագահի առաջարկը: Երկար վիճաբանություններից հետո Սենատը 1920 թ. հունիսի 1-ին 23 կողմ և 52 դեմ ձայնով մերժեց ընդունել Հայաստանի մանդատը¹²:

Հետագայում Լ. Ջորջը քննադատեց Սան Ռեմոյում «Պողոսի կախարդական հեքիաթները» և Ահարոնյանի «կոյր լաւատեսութիւնը» հայկական հարցում¹³: Ահա թե ինչ է գրում Լլոյդ Ջորջը. «Դժուար էր պատկերացնել հայկական դիրքերի անյուսալիութեան աւելի վառ ապացույց, քան այն, թէ ինչպիսի յայտարարութիւններով էին հանդէս գալիս վերին աստիճանի տաղանդաւոր այդ ժողովրդի ականաւոր ներկայացուցիչները, որոնցից կախուած էր նրա ապագան որպէս անկախ ազգ»¹⁴:

Իհարկէ, ինչ-որ առումով ճիշտ էր Լ. Ջորջը, երբ քննադատում էր Պողոս Նուբարի և Ավետիս Ահարոնյանի վարած քաղաքականությունը, ինչպես նաև կույր լավատեսությունը, սակայն մոռանում էր մի պարզ փաստ, որ հայ ազգային գործիչները դասեր չէին առել ոչ հեռավոր անցյալից և շարունակում էին հավատալ երկերեսանի ու ապերախտ եվրոպացիներին: Նրանք չէին ուզում հավատալ, որ իրենց ժողովրդավար կոչողները կարող են սեղմել թուրքերի դեռ արյունոտ ձեռքը և մոռանալ իրենց փոքր դաշնակցին, որն ավելի շատ արյուն էր թափել պատերազմում, քան եվրոպական ցանկացած մեծ տերություն:

Ավելի ուշ՝ 1921 թ. փետրվարին, Լոնդոնի խորհրդաժողովում արդեն Պ. Նուբարն ու Ա. Ահարոնյանը Կիլիկիան չէին պահանջում, քանի որ, ինչպես

¹² Տե՛ս «ժողովուրդ», 21 սեպտեմբերի, 1920:

¹³ Տե՛ս Ա. Եսայան, «Հայկական հարցը» և միջազգային դիւանագիտութիւնը, Եր., 1965, էջ 194:

¹⁴ **Джордж Ллойд**, Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с. 433-438.

գրում է Ա. Ահարոնյանը. «Կիլիկիոյ մեծագոյն մասը Սեվրի դաշնագրով թողուած է Թուրքիոյ եւ որ կազմում է, սակայն, ֆրանսիական տնտեսական գօտին: Սեվրի դաշնագրի իրագործումը պահանջելով մեզ համար՝ մենք չենք կարող միաժամանակ բողոքել այդ դաշնագրի դէմ Կիլիկիայում: Բայց քանի որ թրքական ոչ մի վարչութիւն չի կարող ապահովել հայ ծողովրդի գոյութիւնը, մենք պիտի խնդրէինք եւ երախտագէտ կը լինէինք, եթէ Ֆրանսիա հաճէր այնտեղ ստեղծել տեղական մի ինքնավարութիւն, իր հովանու տակ»¹⁵:

Զնայած Պ. Նուբարը Լոնդոնում հրատարակեց «Կիլիկիոյ բնակչութիւնը՝ պատերազմէն առաջ» գիրքը՝ ի պատասխան Լ. Ջորջի այն հայտարարութեան, թէ Կիլիկիայի մարդահամարի թուրքական և ոչ թուրքական վիճակագրութիւններն իրար հակասում են: Նա ներկայացրեց նաև 1892 թ. թուրքական կառավարութեան հրապարակած պաշտոնական ցուցակը Կիլիկիայում ապրող բնակչութեան վերաբերյալ: Միաժամանակ ներկայացրեց 1920 թ. Պոլսի Հայոց պատրիարքարանի տվյալները, ըստ որի Կիլիկիայում ապրում էին 407000 հայեր¹⁶:

Ազգային պատվիրակութեան գործունեութեան վերլուծութիւնից պարզ է դառնում, որ Հայկական հարցի արդարացի լուծման առնչությամբ նա մեծ և բազմակողմանի աշխատանք է տարել՝ բարեկամական հարաբերութիւններ հաստատելու հայ-պոնտական հարցում, հայ-քրդական համաձայնութիւն է կայացրել և այլն:

Դեռ 1919 թ. ապրիլին Կ. Պոլսի Ազգային ժողովի նախագահ Գ. Ղազարյանը Ազգային պատվիրակութեանը խորհուրդ տվեց համաձայնագիր կնքել վեհաժողովի քրդական պատվիրակութեան ներկայացուցիչ Շերիֆ փաշայի հետ և հայտնեց, որ առաջարկը զալիս է անգլիական աղբյուրներից, նույնն առաջարկեց նաև Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը: Ծրագիրն ընդունվեց հայկական պատվիրակութիւնների նիստում: 1919 թ. նոյեմբերի 20-ին Փարիզում Պողոս Նուբարը, Հ. Օհանջանյանը, Շերիֆ փաշան կնքեցին հայ-քրդական համաձայնագիրը¹⁷: Համաձայնագիրն ուղղված էր Փարիզի վեհաժողովի նախագահ Ժ. Կլեմանսոյին, ցանկութիւն հայտնելով ազատագրվելու թուրքական տիրապետութիւնից և կազմելու միացյալ և անկախ Հայաստան և Քրդստան: Վիճելի հողերի բաժանման առումով նրանք պետք է ենթարկվէին վեհաժողովի վճիռներին:

Համաձայնագրի և հատկապէս Պ. Նուբարի այդ քայլի մասին ազգային կուսակցութիւնների ներկայացուցիչները, հայ գործիչները տարբեր մոտեցումներ և վերաբերմունք դրսևորեցին: Հնչակյանները քննադատեցին Պ. Նուբարին՝ համարելով, որ նա, Շերիֆի հետ համաձայնագիր ստորագրելով, «Քուրդիստան անունով է մկրտել հայկական նահանգները»¹⁸:

ՀՀ՝ Ամերիկայի ներկայացուցիչ Գարեգին Փաստրմաճյանը Վաշինգտոնից բաց նամակ էր ուղղել Պ. Նուբարին, որտեղ մեղադրում էր նրան Միացյալ Հայաստանի պատվիրակութեան անունից Շերիֆի հետ ստորագրած հուշագրի համար: Պ. Նուբարը պատասխանել էր, որ հուշագիրը ստորագրվել է Ահարոնյանին փոխարինող Օհանջանյանը, քանի որ ինքը ստիպված էր

¹⁵ Ա. Ահարոնյան, Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, 1943, Բոստոն, էջ 109:

¹⁶ Տե՛ս «Ժողովրդի ծայնը», Կ. Պոլիս, ապրիլ 29 – մայիս 12, 1920:

¹⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 71:

¹⁸ «Երիտասարդ Հայաստան», Չիկագո, 1920, հունվարի 31 - փետրվարի 2:

մեկնել Լոնդոն: Գ. Փաստրմաճյանի կարծիքով դա չէր թեթևացնում Պ. Նուբարի անձնական պատասխանատվությունը. «...մանավանդ, որ Ղուբ յաւակնութիւնը ունիք ձեր անձին մէջ տեսնելու արևմտահայ դատի օրինաւոր պաշտպանը, իսկ միւսները նկատած էք հայութեան մէկ ուրիշ հատուածին ներկայացուցիչները միայն»¹⁹:

Մեր կարծիքով՝ Փաստրմաճյանը բազմաթիվ մեղադրանքներ էր առաջադրում Պ. Նուբարին և, իբրև Ազգային պատվիրակության անդամ, բողոքում նրա «ապօրինի եւ ազգային շահերը վտանգող քայլի դեմ»²⁰ բոլորովին իզուր: Այդ հուշագրում ոչինչ չկար, որ կարող էր վտանգել Հայկական դատն ու հայ ժողովրդի շահերը, ոչ էլ բառ կամ ակնարկություն՝ հողային գիշումների մասին: Ընդհակառակը, այնտեղ առաջնությունը տրված էր հայկական պահանջներին, և քրդերը ոչ միայն կընդունեին դա, այլև տվյալ պահին կնպաստեին Միացյալ Հայաստանի անկախությանը:

Գ. Փաստրմաճյանին հետևելով՝ նման կարծիք հայտնեց նաև Ռուբեն Տեր-Մինասյանը և, որպես բողոքի նշան, հրաժարվեց Ազգային պատվիրակությանն անդամակցությունից²¹: Հովհաննես Քաջազունին այն կարծիքին էր, որ եթե նույնիսկ պատասխանատվություն կա, ապա դա ոչ միայն Պողոս Նուբարին է վերաբերվում, այլև Ա. Ահարոնյանին և համաձայնագիրը ստորագրող Հ. Օհանջանյանին, այսինքն՝ Միացյալ պատվիրակությանը: «Ես շատ վաղուց և լավ եմ ճանաչում Օհանջանյանին, գիտեմ, որ նա ընդունակ չէ ենթարկվելու պատահական ազդեցությունների»²², - գրել է Հ. Քաջազունին:

Ռամկավարների «Ազգ» օրաթերթը, անդրադառնալով այդ համաձայնությանը, գրում էր. «Լրիւ ըմբռնելու համար հայ եւ քիւրտ համաձայնութեան նշանակութիւնը, պէտք է մտադիր ըլլալ որ անիկա առանձին և պատահական իրողութիւն մը չէ, այլ մէկ օղակը համաձայնութիւններու այն շարքին, զորս Ազգային Պատուիրակութիւնը հետեւողական և իմաստուն քաղաքականութեամբ մը, հետզհետէ կը զոյացնէ երբեմնի օսմանեան կայսրութեան ոչ թուրք տարրերուն հետ»²³:

Նկատի ունենալով միջկուսակցական կրքերի սրման փաստն այդ խնդրի առնչությամբ և ձգտելով թուլացնել լարվածությունը՝ Ա. Ահարոնյանը և Պ. Նուբարը հեռագրեցին Ամերիկահայ ազգային միության նախագահ Մ. Սվազլիին, ուր իրենց անհանգստությունն էին հայտնում և չափազանց ցավալի նկատում մամուլում ի հայտ եկած վեճերը «հայ-քրդական հասկացողության» առթիվ, որը երկու պատվիրակությունների կողմից ոչ մի կերպով չի վնասում հայկական շահերին և պահանջներին²⁴:

Պահպանվել են Ա. Ահարոնյանի՝ այդ հարցին վերաբերող բացատրությունները, նաև Անդրանիկի տեսակետը: Հետագայում Շերիֆ փաշան խեղաթյուրեց հայ-քրդական համաձայնության իմաստը: Նա պաշտպանում էր սուլթանի գերիշխանության ներքո քրդական ինքնավարության հաստատումը²⁵: Շերիֆի այդ քայլի քննադատությամբ հանդես եկավ Ա. Չոպանյանը՝

¹⁹ «Ժողովուրդի ծայնը», 9 – 22 փետրուար, 1920:

²⁰ Նույն տեղում:

²¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 54, թ. 46:

²² «Ժողովուրդի ծայնը», 9 – 22 փետրուար, 1920:

²³ Նույն տեղում:

²⁴ Տե՛ս «Կոչնակ Հայաստանի», Նյու Յորք, փետրվարի 7, 1920:

²⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 54, թ. 47:

ընդգծելով, որ համաձայնագրում կարևորը թրքական բռնապետական լծից ժողովուրդների ազատագրումն է²⁶:

Իհարկե, Արևմուտքին, հատկապես Անգլիային շահավետ չէր Թուրքիայի արևելյան նահանգներում հայկական և քրդական պետությունների ստեղծումը, ապագայում դրանցից մեկի հզորացումը: Ուստի 1919 թ. նոյեմբերի 20-ի հայ-քրդական համաձայնագիրը պարզապես պահպանվեց որպես դիվանագիտական փաստաթուղթ:

Ազգային պատվիրակությունը Պ. Նուբարի գլխավորությամբ, շարունակելով դիվանագիտական գործունեությունը Հայկական հարցի առնչությամբ, 1920 թ. մայիսի 6-ին հանդիպեց Ֆրանսիայի վարչապետ Միլերանի, իսկ մայիսի 10-ին՝ նախագահ Դեշանելի հետ: Այդ հանդիպումների ընթացքում հայրենասեր ազգային գործչի համար պարզ դարձավ, որ Ֆրանսիան ոչ միայն Կիլիկիան հանձնելու էր թուրքերին, այլև ՀՀ-ին սպառնացող բոլշևիկյան վտանգի դեմ ոչինչ չէր ձեռնարկի²⁷:

1920 թ. մայիսի 5-ից մինչև հուլիսի 13-ը Փարիզում Հայ ազգային պատվիրակության պաշտոնատանը տեղի ունեցավ Հայ ազգային երկրորդ համագումարը 24 պատգամավորների մասնակցությամբ, որն անցկացրեց 31 նիստ²⁸: Բացելով համագումարը՝ Գաբրիել Նորատունկյանը, որպես Հայկական հարցի լուծման գերագույն պայմաններ, նորից կոչ արեց միասնության և համերաշխության: Պ. Նուբարը համագումարին ներկայացրեց Լոնդոնի առաջին և Սան Ռեմոյի խորհրդաժողովներում Հայկական հարցի քննարկման ընթացքը: Համագումարը հաստատեց Հուշագիրը, որը Միացյալ Հայաստանի պատվիրակության կողմից ներկայացվելու էր դաշնակից երկրների գերագույն խորհրդին: Ազգային համագումարին իրենց հրաժարականը ներկայացրին Պողոս Նուբարն ու Ազգային պատվիրակության անդամներ Վ. Թեքեյանը, Ա. Զոպանյանը, Հ. Նևրուզը: Համագումարը չընդունեց նրանց հրաժարականները: Ուստի Պողոս Նուբարը, որպես Ազգային պատվիրակության նախագահ, շարունակեց իր հայանպաստ գործունեությունը:

1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի մոտ՝ Սևրում, ստորագրվեց հաշտության պայմանագիր Առաջին աշխարհամարտում հաղթած դաշնակից երկրների և պարտված Թուրքիայի սուլթանական կառավարության միջև: Հայաստանի Հանրապետության անունից պայմանագիրը ստորագրեց Ավետիս Ահարոնյանը. «... թիրքական դաշնագիրն ստորագրել է Հայաստանի կողմից միայն պարոն Ահարոնյանը, իսկ Պողոս Նուբարն այդ գործին չէ մասնակցել, որովհետև դաշնակիցները որոշած են եղել թէ դաշնագրի տակ ստորագրութիւն դնելու իրաւունք տրուում է միայն Հայաստանի Հանրապետության լիազօրներին դաշնագիրը թուրքական պատվիրակությանը հանձնելու հանդեսին մասնակցելու հրավիրված էր նաև Պողոս Նուբարը, որը ստորագրել է Թուրքիային յանձնւած դաշնագիրը»²⁹:

Բայց այդ պայմանագիրն արդեն ուշացած էր, և այն իրականություն դարձնելու հնարավորություններ չկային: Դաշնակիցների դանդաղկոտության պատճառով Թուրքիայում սկսվել և մեծ թափ էր ստացել քեմալական շարժումը, որի նպատակն էր թույլ չտալ թուրքական պետության մասնատումը և պահպանել ամբողջականությունը:

²⁶ Տե՛ս «Պահակ», Պոստոն, 1920, ապրիլի 22, թ. 33:

²⁷ Տե՛ս **Զավեն Արք. Եղիայեան**, Պատրիարքական յուշերս, Գահիրե, 1947, էջ 340-342:

²⁸ Տե՛ս Հայկական հարց. հանրագիտարան, Եր., 1996, էջ 200:

²⁹ «Ժողովուրդ», 21 սեպտեմբերի 1920:

Հետագայում Ու. Չերչիլը, անդրադառնալով Սևրի պայմանագրին, նշում էր. «13 ամիս նախապատրաստող այդ փաստաթուղթը հնացաւ ավելի շուտ, քան պատրաստ էր»³⁰:

Իսկ ռամկավար գործիչ Ա. Ղարբինյանն այդ առնչությամբ գրում է, որ ոչ միայն մենք, այլև նույնիսկ Փարիզի մեջ շատերը իրողության տպավորության տակ «չէին կրցած ըմբռնել թէ դաշնակից պետութիւնները Սեւրի դաշնագրով ոչ թէ տաճկական Հայաստանի անկախ պետականութիւնն է որ կը ճանչնան, այլ անոր դագաղն է կը պատրաստեն յառաջիկային Լոզանի մէջ տապանաքարի մը տակ դնելու համար»³¹:

1920 թ. օգոստոսի 14-ին Պ. Նուբարը նոտա ուղարկեց խաղաղության վեհաժողովի նախագահ Միլերանին³²: Նա բողոքեց Կիլիկիան և Խարբերդը թուրքերին թողնելու առթիվ, պահանջեց այդ տարածքները հանձնել Ֆրանսիայի հովանավորությանը և նշեց, որ Հայ ազգային պատվիրակությունը չի դադարելու պահանջել այդ տարածքները: Պողոս Նուբարի բողոքի նոտան, բնականաբար, անուշադրության մատնվեց: Եթե երկու տարի քննարկումներից հետո մեծ պետութիւնները որոշել էին Կիլիկիան թողնել թուրքերին, ապա պայմանագրի ստորագրումից մի քանի օր հետո չէին փոխի իրենց քաղաքականությունը: Շարունակելով Կիլիկիայի համար պայքարը՝ 1920 թ. դեկտեմբերի 1-ին Պ. Նուբարը «Կիլիկիայի հարցի ներկա վիճակը» վերնագրով հուշագիր ներկայացրեց ֆրանսիական կառավարությանը: Նուբար փաշան այս անգամ առաջարկում էր Կիլիկիայում ստեղծել ինքնավար քրիստոնյա վարչություն՝ Ֆրանսիայի հովանու ներքո և խառը ոստիկանություն՝ ֆրանսիացի սպաների հրամանատարությամբ: Ըստ նրա՝ այդ լուծումը չէր հակասի Սևրի դաշնագրին և կապահովեր Ֆրանսիայի շահերը Կիլիկիայում, ինչպես նաև ֆինանսական նոր հատկացումներ չէին պահանջվի և հնարավոր կլիներ խաղաղություն պահպանել Սիրիայի հյուսիսում: Նա կարծում էր նաև, որ Ֆրանսիայի համար Կիլիկիայում ավելի մեծ տնտեսական շահեր կային, քան այդ երկրին անցած մյուս երկրամասերում միասին վերցրած»³³:

Պողոս Նուբարի այդ ծրագիրը բավական իրատեսական էր, բայց Ֆրանսիան արդեն մերժեցնում էր քեմալական Թուրքիային և ապահովել էր իր տնտեսական շահերը, ինչի հետևանքով էլ թուրքերին զիջեց հայկական Կիլիկիան:

Անգլիացի որոշ քաղաքագետներ, ովքեր անհույս էին համարում Արևմտյան Հայաստանի ազատագրումը, մինչև Սևրի պայմանագրի ստորագրումը կողմնակից էին Կիլիկիային ինքնավարություն տրամադրելուն և Ազգային պատվիրակությանը խորհուրդ էին տալիս հայության բեկորները համախմբել Կիլիկիայում և ֆրանսիական մանդատի ներքոյ կազմել «ազգային բոյն մը»³⁴:

1921 թ. փետրվարի 17-ին Անգլիայի արտաքին գործերի նախարարությունում կազմված մի փաստաթղթում նույնպես նախատեսվում էր Հայաստանին հանձնել միայն մինչև 1914 թ. ռուս-թուրքական սահմանները, իսկ արևմտահայերին տեղավորել Կիլիկիայում, ուր «պետք է ինքնաւարութիւն

³⁰ Черчилль У., Мировой кризис, М.-Л., 1932, с. 258.

³¹ Ա. Ղարբինեան, Հայ ազատագրական շարժման օրերէն (հուշեր 1890 - են - 1940), Փարիզ, 1947, էջ 427:

³² Տե՛ս ՀԱՍ, ֆ. 57, ց. 5, գ. 224, թ. 12:

³³ ՀԱՍ, ֆ. 412, ց. 1, գ. 2206, թ. 1-5:

³⁴ ՀԱՍ, ֆ. 282, ց. 1, գ. 54, թ. 2:

տրուէր հայերին՝ Թուրքիայի գերիշխանութեան եւ Ազգերի լիգայի հովանուներքոյ»³⁵: Սակայն 1920 թ. ամռանը և աշնանը տեղի ունեցած իրադարձութիւնները՝ քեմալական Թուրքիայի պատերազմը Հայաստանի Հանրապետության դէմ, օրեցօր անրապնդվող խորհրդա-թուրքական դաշինքը, մեծ պետութիւնների հաշվենկատ «խաղերը» քեմալական կառավարության հետ հիմնովին փոխեցին ուժերի հարաբերակցութիւնը Մերձավոր Արևելքում:

1921 թ. Հայաստանում տեղի ունեցող փետրվարյան ապստամբության օրերին՝ փետրվարի 21-ից մինչև մարտի 14-ը Լոնդոնում հրավիրվեց մեծ պետութիւնների խորհրդաժողով: Բազմաթիվ հարցերի թվում այստեղ քննարկվեց նաև Սևրի հաշտության պայմանագրի վերանայման հարցը: Փետրվարի 26-ին Պողոս Նուբարն ու Ավետիս Ահարոնյանը ներկայացան Լոնդոնի խորհրդաժողովին³⁶: Հայ պատվիրակները պահանջեցին «պահպանել պայմանագիրն այնքանով, որքանով այն վերաբերում էր Հայաստանին»³⁷:

Խորհրդաժողովում Ազգային պատվիրակութիւնը պաշտպանում էր Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի շահերը: Հայկական պատվիրակութիւնները լիովին չմիավորվեցին, ինչպես թուրքականը, այլ հանդես եկան յուրաքանչյուրն իր պատվիրակության անունից, տարբեր հարցադրումներով: Ինչպես Պողոս Նուբարի, այնպես էլ Ավետիս Ահարոնյանի (որն իր հակախորհրդային ելույթում խեղաթյուրում էր իրականութիւնը) ելույթից պարզորոշ երևում է, որ հայ ժողովրդի անունից հանդես եկած երկու դիվանագետներն էլ չէին ըմբռնել տեղի ունեցած իրադարձութիւնների բնույթը և զուր փորձեր էին անում վերադարձնելու անդամնալին՝ Թուրքիայի կողմից գրավված Արևմտյան Հայաստանը և Կարսի նահանգը: Պողոս Նուբարը նշեց. «Ռուսիոյ վերատիրացումը կովկասեան Հայաստանին՝ չի կրնար արգելք դառնալ թրքական Հայաստանի մասին՝ Սեվրի մեջ ընդունուած որոշումին գործադրության ... Քեմալականները ճիշտ է, որ այսօր բռնի ուժով տիրացեր են թրքական Հայաստանին, բայց Թուրքիա յաղթական պետութիւններու հսկողութեան տակ գտնուելով՝ դաշնակիցները կրնան նուազագոյն ճնշումի դիմելով հեռացնել քեմալականները այնտեղէն»³⁸:

Լորդ Քերզոնը հայկական երկու պատվիրակութիւնների նախագահների առաջարկութիւններն ու բացատրութիւնները լսելուց հետո պատասխանեց, որ Սևրի դաշնագիրը նույնութամբ գործադրելու համար այժմ շատ դժվարութիւններ կան և մատնանշեց հետևյալ կետերը. թուրքերի հարձակումը Հայաստանի վրա, Ալեքսանդրապոլի դաշնագիրը, Հայաստանի խորհրդայնացումը և Լոնդոնի խորհրդաժողովում Գ. Չիչերինի արած հայտարարութիւնը, թե՛ Ռուսաստանը 1914 թվականի իր սահմաններն է փնտրում, հայերի պարտութիւնը թուրք-հայկական պատերազմում, որը մատնանշում է հայկական բանակի քայքայումը և Հայաստանում սկսված քաղաքացիական կռիվները: Այդ բացատրութիւններից հետո Լորդ Քերզոնը հայտարարեց, թե մեծ պետութիւնները այժմ ի վիճակի չեն զինվորական մեծ օգնութիւն ուղարկել հայերին, իսկ ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնն էլ ընդգծեց, որ Հայաս-

³⁵ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828 - 1923), Եր., 1972, էջ 696:

³⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 697 - 704:

³⁷ Նույն տեղում, էջ 698:

³⁸ Ա. Դարբինեան, նշվ. աշխ., էջ 477 - 478:

տանի՝ Սևրի պայմանագրով նախատեսված սահմանները ճշտելու հարցում շատ դժվարություններ կան:

Ապա Ազգային պատվիրակության նախագահ Նուբար փաշան մեկ անգամ ևս խորհրդաժողովում ներկայացրեց Կիլիկիայի հարցը և խնդրեց դաշնակից պետություններից Կիլիկիային ինքնավարություն շնորհել, երբ Ֆրանսիան դեռ 1920 թ. ապրիլին Սան Ռեմոյի խորհրդաժողովում, ապա նաև Սևրի պայմանագրով արդեն համաձայնել էր Կիլիկիան վերադարձնել Թուրքիային: Ի պատասխան այդ խնդրանքի՝ Ֆ. Բերտելոն պատասխանեց. «Ֆրանսիան վճռել է անել ինչ որ կարող է՝ ապահովելու համար լիակատար երաշխիք հայկական փոքրամասնությանը... Բոլոր դեպքերում Ֆրանսիան կպահի իր պարտավորությունները, ինչպիսին էլ որ լինեն նրա հարաբերությունները Թուրքիայի հետ»³⁹:

Արդեն Լոնդոնի խորհրդաժողովի օրերին Ֆրանսիան անջատ բանակցություններ էր վարում Բեքիր Սամի բեյի հետ, որոնք ավարտվեցին մարտի 9-ին ֆրանս-թուրքական համաձայնագրի ստորագրմամբ: Սա Ֆրանսիայի վարած երկդիմի քաղաքականության ևս մեկ օրինակ էր, որը Պողոս Նուբարի նման ազնիվ ազգային գործիչը հաշվի չէր առել: Չէ՞ որ դաշնակիցները վաղուց էին հրաժարվել Արևմտյան Հայաստանը քեմալականներից զենքի ուժով ազատագրելուց, ինչպես նաև նյութական աջակցությունից, նույնիսկ զինվոր կամ դրամ տրամադրելուց:

1921 թ. մարտի 4-ին Լոնդոնի խորհրդաժողովում որոշվեց փոփոխություններ մտցնել Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող մասում և Թուրքիային առաջարկեցին իր արևելյան տարածքների վրա կազմել հայկական «Ազգային օջախ», որի սահմանները որոշելու էր Ազգերի լիգայի կազմած հանձնաժողովը⁴⁰:

«Լոնտոնի մէջ հայերուն տրուելիք «Ազգային Տուն»-ը կուզար քանդելու Սեւրի մէջ տրուած «Միացեալ եւ անկախ Հայաստան»-ի օղակառոյց շէնքը»⁴¹, - գրում է ռամկավար գործիչ Արտակ Դարբինյանը:

Իսկ անվանի պատմաբան Գ. Գալոյանը նշում է. «Լոնդոնի դաշնակցային խորհրդաժողովը ըստ էության չեղյալ հայտարարեց Սևրի պայմանագիրը, չնայած այն իր պաշտոնական ձևակերպումը գտավ միայն Լոզանի խորհրդաժողովում: Դա այն վարձն էր, որ տրվում էր քեմալականներին բուլշևիկյան Ռուսաստանի դեմ պայքարելու համար, որից տուժեցին նաև հենց իրենք՝ դաշնակիցները»⁴²:

Լոնդոնի խորհրդաժողովում Հայաստանի երեկվա դաշնակիցները Միացյալ Հայաստանի փոխարեն առաջարկեցին Թուրքիայի արևելյան նահանգներում «Ազգային օջախ» ստեղծում: Քանի որ թուրքերը, ոգևորված ձեռք բերված զիջումներով, ընդդիմացան նաև դրան, ուստի այդ համեստ ծրագիրը ևս մնաց թղթի վրա:

Ինչ վերաբերում է Կիլիկիային և կիլիկիահայությանը, որոնց շահերը անձնուրաց ձևով պաշտպանում էր Ազգային պատվիրակությունը, 1921 թ. հոկտեմբերի 20-ին ստորագրված ֆրանս-թուրքական համաձայնագրով Ֆրանսիան Կիլիկիան հանձնեց Թուրքիային, իսկ հայ բնակչությունը ստիպ-

³⁹ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828 - 1923), Եր., 1972, էջ 703-704:

⁴⁰ Տե՛ս Ա. Դարբինեան, նշվ. աշխ., էջ 480:

⁴¹ Նույն տեղում, էջ 479-480:

⁴² Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917 - 1923 թթ., Եր., 1999, էջ 435:

ված եղավ հեռանալ: Ճիշտ է, դեռ 1921 թ. ապրիլի 5-ին Փարիզ էր ուղարկվել Կիլիկիայի քրիստոնյա համայնքների ներկայացուցիչների բողոքի հեռագիրը: Բայց դա չխանգարեց ֆրանսիացի դիվանագետներին՝ շարունակելու հետագա բանակցությունները Թուրքիայի հետ: Իսկ քեմալականները ստորագրած համաձայնագիրն օգտագործեցին Հայկական հարցը քննարկումից հանելու համար, իսկ մեծ պետություններն էլ իրենց հերթին սկսեցին ավելի ու ավելի քիչ զբաղվել դրանով:

Ըստ էության, Լոնդոնի խորհրդաժողովում Անկարայի պատվիրակության ներկայացրած հաշտության ծրագիրն արտահայտում էր «Ազգային ուխտի» բոլոր հիմնական սկզբունքները, այսինքն՝ չէր ճանաչում հայերի ինքնորոշման իրավունքը, օրինականացնում էր Կարսի նահանգի և Հայաստանի մյուս տարածքների գավթումը և ոչ մի լուրջ երաշխիք չէր ապահովում Թուրքիայի կազմում բռնի թողնված ազգային փոքրամասնությունների համար:

Ի վերջո, 1922 թ. նոյեմբերի 20-ին Լոզանում բացվեց մեծ պետությունների նոր խորհրդաժողովը, որը մեկ անգամ ևս անդրադարձավ Հայկական հարցին: Նոյեմբերի 22-ին այստեղ քննարկվեց փոքրամասնությունների հարցը:

1922 - 1923 թթ. Լոզանի միջազգային խորհրդաժողովում Ազգային պատվիրակությունը գլխավորում է հասարակական, քաղաքական գործիչ, դիվանագետ Գաբրիել Նորատունկյանը: Պատվիրակությունը պաշտոնական մասնակցության իրավունք չստացավ: Այդուհանդերձ, Ազգային պատվիրակությունը (Գ. Նորատունկյան, Լ. Բաշայան) ՀՀ պատվիրակության հետ համատեղ ներկայացրեց հուշագիր, որն առաջարկում էր Հայկական հարցի երեք հնարավոր տարբերակ՝

1. «Հայկական ազգային օջախի» ստեղծում ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի սահմանագծած Հայաստանի տարածքում:

2. Երևանի հանրապետության, այսինքն՝ Հայաստանի խորհրդային տարածքի ընդարձակում՝ նրան կցելով Արևմտյան Հայաստանի մի մասը դեպի ծով ելքով:

3. «Հայկական ազգային օջախի» ստեղծում Կիլիկիայում:

Թուրքական պատվիրակությունը մերժեց իր տարածքում որևէ «Հայկական ազգային օջախի» ստեղծումը և Անտանտի պետություններին պարտադրեց իր կամքը:

Վերջին անգամ Հայկական հարցը շոշափվեց 1923 թ. հուլիսի 17-ի նիստում և, վերածվելով հայ գաղթականության հարցի, փոխանցվեց Ազգերի լիգային: Կնքված պայմանագրերում խոսք անգամ չկար Հայաստանի և հայերի մասին: Փաստորեն, Թուրքիան ոչ միայն յուրացրեց Արևմտյան Հայաստանը (ցեղասպանության ենթարկված հայերի պատմական հայրենիքը), Կիլիկիան, այլև խորհրդային «ագիտատորներից» պաշտպանվելու պատրվակով մերժեց աշխարհասփյուռ արևմտահայերի վերադարձը հայրենիք: Լոզանի խորհրդաժողովն ավարտվեց՝ քննարկված հարցերին վերջնական լուծում չտալով, առանց դաշնագիրը վավերացնելու:

Եթե ամփոփենք Ազգային պատվիրակության և նրա նախագահ Պողոս Նուբարի գործունեությունը Հայկական հարցի առնչությամբ, ապա կարելի է հանգել այն եզրակացության, որ 1912 թ. մինչև 1921 թ. միջազգային տարբերատյաններում ներկայացվել է այն, մեծ նվիրվածությամբ պայքար է մղվել դրա լուծման համար, անձնուրաց պաշտպանվել են արևմտահայության

շահերը՝ ձգտելով իրականություն դարձնել իրենց և նրանց երազանքները: Սակայն առաջին աշխարհամարտի տարիներին ցեղասպանության ենթարկված և հայրենիքից բռնագաղթված հայ ժողովուրդն ի վիճակի չէր սեփական ուժերով հասնելու իր նվիրական նպատակի իրագործմանը: Հույսը օտարների վրա դնելիս էլ անհրաժեշտ էր ունենալ հմուտ պետական, քաղաքական, ձկուն դիվանագիտական գործիչներ: Սակայն, մեր կարծիքով, վեց դար պետականություն չունենալը, օտարի տիրապետությունը, ճնշումը, հալածանքը թույլ չտվեցին հայ ժողովրդին մշակելու ազգային, դիվանագիտական ինքնուրույն ավանդույթներ, որոնցից կարելի էր օգտվել:

Ստեղծված պատմական պայմաններում Ազգային պատվիրակությունը և Պողոս Նուբարը, ոգևորված մեծ պետությունների խոստումներով, առաջ քաշեցին «ծովից ծով» Հայաստանի ստեղծման անհրաժեշտությունը, որը, նրանց կարծիքով, կարող էր իրականություն դառնալ պատերազմում հաղթած պետությունների և, առաջին հերթին, ԱՄՆ-ի աջակցությամբ: Չէ՞ որ ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի գործունեությունը հայանպաստ էր, իսկ պետությունն էլ համարվում էր Հայաստանի հովանավորի գլխավոր թեկնածուն:

Փաստորեն, իրատեսական չէր պատվիրակության և Նուբար փաշայի ցանկությունը: Նրա գլխավորած պատվիրակությունը Հայկական հարցի առնչությամբ բավական ճանապարհ էր անցել, սակայն միամտորեն հավատում էր դաշնակից պետությունների ազնվությանը, մարդասիրությանը, խոստումներին: Մինչդեռ, հենց այդ պետությունների ղեկավարները Ազգային պատվիրակությանն սկզբից ևեթ արգելեցին մասնակցել Փարիզի հաշտության վեհաժողովին, իսկ Մուդրոսի զինադադարի պայմանագրով Հայաստանը թողեցին թուրքերի «վերահսկողության» ներքո: Արևմուտքի պետությունները Մերձավոր Արևելքին առնչվող հարցերում առաջնորդվեցին միմիայն իրենց շահերով, որոնցից յուրաքանչյուրը, Սևրից սկսած, ձգտում էր թուրքիայի հետ ամեն կերպ իր բարեկամությունը վերահաստատել: Իսկ այդ հարաբերություններում հաղթանակած թուրքիան աստիճանաբար իր կամքն էր թելադրում Անտանտի պետություններին: Անգլիան, Ֆրանսիան զիջումների էին գնում՝ ի հաշիվ ազգային փոքրամասնությունների (հայեր, հույներ, թրակիայի բուլղարներ) օրինական շահերի:

Հայկական հարցի լուծման վրա իր բացասական ազդեցությունն ունեցավ նաև Ազգային և ՀՀ պատվիրակությունների ոչ համաձայնեցված, աններդաշնակ գործունեությունը:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Առաջին աշխարհամարտից հետո հրավիրված միջազգային խորհրդածողովներում Հայկական հարցի քննարկումը մեծ պետությունների կողմից ամենևին էլ նպատակ չէր հետապնդում հայ ժողովրդին դուրս բերելու մղձավանջային դրությունից, այլ, պարզապես, Անտանտի պետություններից յուրաքանչյուրը ձգտում էր այդ հարցի արժարժուն օգտագործել հակախորհրդային նպատակներով, թուրքիայից որևէ պատառ պոկելու, Մերձավոր Արևելքում սեփական դիրքերն ամրապնդելու կամ, ինչպես Ֆրանսիան, փոքր ժողովուրդների հաշվին թուրքական կառավարողների հետ համաձայնություն ձեռք բերելու համար:

ЛАРИСА МАНУКЯН

Преподаватель кафедры
„Философии и армянской истории“ АГЭУ

Национальная делегация и Армянский вопрос (1918 – 1923 гг.). - В ноябре 1912 г. по кондаку католикоса всех армян Геворка 5-го Суренянца армянин из Египта благотворитель Погос Нубар - паша был назначен полномочным делегатом с целью ведения переговоров со странами, подписавшими Берлинский договор. Для этого было предложено создать Национальную делегацию.

Национальная делегация, созданная после Первой мировой войны в новых исторических условиях поставила перед собой цель с помощью больших государств в случае расчленения Турции, проигравшей войну, освободить Западную Армению и создать объединенную независимую и целостную Армению. 12-го февраля 1919 г. в Париже армянская делегация во главе с А. Агароняном и Национальная делегация под представительством Погоса Нубар-паши представили за своей подписью „Меморандум“, содержащий единые армянские национальные требования.

Национальная делегация на международных конгрессах (Сан-Ремо, Севр, Лондон, Лозанна) представила и защитила западноармянские интересы, боролась за решение Армянского вопроса, стремилась на разных этапах переговоров хотя бы отчасти осуществить мечты насильственно переселенного из своей страны народа.

При создавшихся неблагоприятных международных условиях проект, предложенный делегацией, был нереальным. Эти деятели имели достаточный опыт связанный с Армянским вопросом, однако наивно верили в честность и обещаниям вчерашних союзников. В то время как именно вследствие корыстной политики руководителей этих государств провалилось решение Армянского вопроса и историческая родина армянского народа была возвращена кемальской Турции.

LARISA MANUKYAN

Lecturer at the Chair of

„Philosophy and Armenian History” at ASUE

The National Delegation and the Armenian Question (1918-1923).- In November 1912, due to the official message of the supreme patriarch of all Armenians' Gevorg E Surenyants, an Egyptian Armenian philanthropist Poghos Nubar Pasha was authorised to head the Armenian National Delegation to negotiate with the states that had signed the Treaty of Berlin. Under the new historical circumstances created after World War I the National Delegation aimed to liberate Western Armenia in case Turkey was defeated with the support of large states and to create a united independent Armenia. On February 12, 1919 the head of the RA Delegation A. Aharonyan and the head of the National Delegation Poghos Nubar Pasha introduced the Armenian Memorandum with their signatures involving unified national requirements. The National Delegation introduced and protected the interests of Western Armenians at international conferences (San Remo, Sevr, London, Lausanne), fought for the solution of the Armenian Question and strived to realize the dreams of the people who had been forced to flee their homeland. Under current bad international circumstances the project proposed by the Delegation wasn't realistic. Those statesmen had significant experience in the Armenian Question, but they naively believed in the honesty and promises of their former alliances. Meanwhile, the solution of the Armenian Question was a failure in the result of the policy of the heads of those states, and the historical homeland of the Armenian Nation was returned to Kemal Turkey.

«ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ» ՀԱՆԴԵՍԻ 2013 Թ. ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՈՎՍԵՓ
 Տնտեսական աճի որակի հարցի շուրջ 4.29

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՊԱՅԱՆԵ
 Հակամրցակցային համաձայնությունների բացահայտման խնդիրները պետական գնումների գործընթացում..... 2.60

ՀԱԿՈՔՅԱՆ ՄՈՒՇԵՂ
 Հարկաբյուջետային կայունության գնահատման հիմնախնդիրը..... 1.7

ՄԱՅԻՆՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ
 Սոցիալական կապիտալի էությունը և դրա դրսևորման առանձնահատկություններն անցումային տնտեսությունում 3.42

ՄԻՆԱՍՅԱՆ ՀԱՅԿ
 Ֆրիդրիխ-Ավգուստ ֆոն Հայեկի՝ փողի ապապետականացման հայեցակարգը և ժամանակակից վիրտուալ փողերը... 2.48

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ
 Տնտեսական աճ, թե՞ տնտեսական զարգացում. նոր մոդելի որոնումներ 3.25

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՏՈՍ
 Տնտեսական աճի որակական բնութագրերը զարգացման համատեքստում..... 3.7
 Տնտեսական զարգացման հայեցակարգային ընկալումները 4.9

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

ԵՂԻԱՋԱՐՅԱՆ ԱՇՈՏ
 Եվրասիական մաքսային միություն: Հնարավորություններ, թե՞ վտանգավոր փակուղի 3.53

ՄԵԺՆՈՒՄՅԱՆ ՈՒՒԶԱՆ
 Տարածաշրջանային առանձնահատկությունները հյուրանոցային ծառայությունների շուկայում 1.31

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԻՇԽԱՆ, ՂՈՒՆՅԱՆ ՈՒՒԶԱՆ
 Արմավիրի մարզի արդյունաբերության առանձնահատկությունները և ճյուղային կառուցվածքի վերլուծությունը 1.21

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵՆՆՈՒՈՒԳԻԱՆԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇԽԵՆ
 ՀՀ ՏՏ ոլորտի բնորոշ գծերը, զարգացման միտումները և խթանման մոդելի առաջադրած հիմնախնդիրները 2.28

ՆԱԶԱՐԵԹՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

Ամպային համակարգերի արդյունավետության
ցուցանիշների գնահատումը 2.37

**ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԴԱՆ, ՍԱՐԳՍՅԱՆ ԱԼԿԱՐԴ, ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԻԱՆԱ,
ՍԱՀԱԿՅԱՆ ԼԵԿՈՆ**

Ապրանքային պաշարների հաշվառման նոր մոտեցումներ
ցանցային տնտեսության համակարգում 2.16

ԿԱՐԴԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ

Ազգային տեղեկատվական ենթակառուցվածքի զարգացման
հիմնախնդիրները..... 2.7

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԹՈՎԱՍԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության
կառավարման համակարգը և զարգացման
հայեցակարգային հիմքերը ՀՀ-ում 3.86

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՏԱԹԵԿԻԿ

Պետության դերը ծառայությունների ոլորտի կարգավորման
գործում 3.75

ՍՏԵՂԾԱՐԱՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐԻԶԿՈՎԱ ՅԱՆԱ, ՊԱՏՏՈՐ ՈՌԻԴՈՆՅ

Նորածնությունը որպես ստեղծարար ոլորտ ամբողջ
աշխարհում և Սլովակիայում..... 1.136

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆԱՆՅԱՆ ԱՆՈՒՇ

Ներդրումային գործընթացների կարգավորման արդի
հիմնախնդիրները ՀՀ-ում 4.46

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԽԱԹՈՒՆ

Եվրոպական միության պարտքային ճգնաժամը 2.95

ԳԱՆՈՅԱՆ ԴԻԱՆԱ

Համաշխարհային տնտեսության ժողովրդագրական
հիմնախնդիրը և Հայաստանի Հանրապետությունը..... 4.38

ԴՅՈՒՐԵՉ ՈՒՉԱՐԴ

Ինչպե՞ս վերակառուցել Արժույթի միջազգային
հիմնադրամը 3.140

ՂԱՆՈՒՄՅԱՆ ՎԱՀԱՆ

«Ուղեղների արտահոսքի» համընդհանրական բնույթը
արդի ժամանակաշրջանում 3.133

ՓԱԽՆՅԱՆ ԱՆՆԱ

Հայաստանի Հանրապետությունը «ոչ կոնֆլիկտային
ադամանդների» համաշխարհային շուկայում 3.118

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎԱԿԱՆՅԱՆ ԼԻՒԻԹ

Համաշխարհային տնտեսության հետձգնաժամային
զարգացումները 1.39

ՄԱԿՐՈՒԿՈՆՈՄԻԿԱ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԻՇԽԱՆ, ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀՀ տնտեսական աճի գործոնային վերլուծություն 3.67

ՏԻԳՐԱՆՅԱՆ ՎԱՐՍԻԿ

ՀՀ տնտեսության մակրոտնտեսական իրավիճակը նախաձգնա-
ժամային և հետձգնաժամային ժամանակաշրջանում 2.79

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԵՎԱԿ

Կենսաթոշակային բարեփոխումների և կենսաթոշակային
ֆոնդերի կառավարման միջազգային փորձի
վերլուծությունը 4.53

ՊՈՂՈՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ, ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ ԱՐԵԳ

Արժեթղթերի շուկայի միջազգայնացման և ինստիտուցիոնալ
փոխա-
կերպման արդի միտումները 3.98

ՏՈՆԻԿՅԱՆ ԱՐՄԱՆ

Վարկային քաղաքականության անհրաժեշտությունը վարկային
պորտֆելի արդյունավետ կառավարման գործընթացում ... 4.69

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀՀ բժշկական ապահովագրության համակարգի հիմնա-
խնդիրները և դրանց լուծման ռազմավարությունը 3.108

ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ ԱՇՈՏ, ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ, ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ ԼԻՒԻԹ

Ապահովագրական շուկայի ձևավորման և զարգացման
վարկային պորտֆելի արդյունավետ կառավարման
գործընթացում 4.78

ՍԱՐԳՍՅԱՆ ՀՈՎԱՍԵՓ

ՀՀ առևտրային բանկերի մասնաճյուղերի տնտեսական
կառավար-
ման կատարելագործման ուղիները 2.106

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀՀ ապահովագրական շուկայում չավարտված ռիսկի
տեխնիկական պահուստի հաշվարկման մեթոդաբանական
մոտեցումները 2.112

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ԱՌԴԻՏ

ԳԱՆՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների հետևանքների արտացոլումը հաշվառման մեջ 1.49

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԻԱՆԱ

Ներդրումային ռիսկի կառավարման ծրագրերի ու հիմնական մեթոդների դասակարգումը 4.90

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀՀ արտադրական կազմակերպությունների սնանկացումը բնորոշող ֆինանսական գործակիցների վերլուծությունը ... 4.103

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

Արդյունաբերական քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները ՀՀ-ում 2.70

ՄԱՐՔԵԹԻՆԳ

ՄԱՀՐԱՂՅԱՆ ՍԻԼՎԱ, ԴԱՋԱՐՅԱՆ ԱՄԵԼԻԱ

Ճառագայթային մշակման ենթարկված սննդամթերքի մարքեթինգային որոշ հարցերի ուսումնասիրությունը 3.151

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԱՍՅԱՆ ՎԱՂԻՄԻՐ

Ռիսկերը և ՀՀ գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման մեջ դրանց հաղթահարման հնարավորությունները 1.69

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՍԵՐԳԵՅ

Հողի՝ որպես ազգային գլխավոր հարստության արդյունավետ օգտագործման խնդիրը 1. 62

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎԱԿԱՆՅԱՆ ՅՈՒՐԻ

Նիցշեի ազդեցությունը Իսահակյանի աշխարհայացքի ձևավորման և ստեղծագործության վրա 2.118

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՌՈՒԴԻԿ

Վիճակագրական մոդելավորման և կանխատեսման գործընթացներում որոշակի պարտադիր նախադրույթների կիրառումը 4.118

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՀՀ մանրածախ առևտրային կազմակերպությունների
գործունեության արդյունավետության վիճակագրական
վերլուծությունը ինդեքսային մեթոդով 4.124

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԱԹՅԱՆ ՎԱՐԴԱՆ

«Ուղեղային կենտրոններ». անցյալ, ներկա և ապագա 1.104

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՆԵՐԻ

Գիտական հրապարակումների լեզվական ձևակերպման
մի քանի հարց 1.118
Գիտական աշխատանքի լեզվատրամաբանական
մատուցումը..... 2.134

ԶՔՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՍԵՐԳԵՅ, ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՇՈՒՇԱՆ

Զբոսաշրջության ու հանգստի ինդուստրիայի զարգացման
մախապայմանները Լեռնային Ղարաբաղի
Հանրապետությունում 4.130

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԹՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Հարավային Կովկասի անվտանգության հարցերի շուրջ 4.136

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԼԱՐԻՍԱ

Ազգային պատվիրակությունը և Հայկական հարցը
(1918 – 1923 թթ.)..... 4.146

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՄ

Հայկական հարցի ծագումը, միջազգայնացումը, դասերը
և հետևանքները 1.86

ՆՈՐ ԳՐՔԵՐ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ, ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Հայերը և Թուրքիայի տնտեսությունը..... 1.145

